ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 25 » ապրիլ 2025թ. No 2545 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 02-Ի N 1970-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/1902-25 առ 21.04.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2025 թվականի ապրիլի 02-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի հավաստագրի ժամկետի երկարաձգման մասին» N 1970-Ա հրամանի հավելվածի 3-րդ տողի 12-րդ սյունակի «03.12.2025» բառերը փոխարինել «05.09.2025» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, առողջապահության նախարարության հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը.

2) սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

Recoverable Signature

X

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ